ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիման վրա կազմավորված Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում Պատմության ինստիտուտի ստեղծումը նոր թափ հաղորդեց հայրենի պատմագիտությանը: Հիմնադրումից անմիջապես հետո ինստիտուտն իր շուրջը համախմբեց հայ պատմագիտության նշանավոր շատ երախտավորների ու դարձավ հանրապետության պատմական մտքի հիմնական և առաջատար հաստատությունը: Ինստիտուտում սկսվեց հայ ժողովրդի պատմության ամբողջական և համակարգված հետազոտումը՝ ի սկզբանե մինչև նորագույն ժամանակաշրջանը:

Ինստիտուտի հիմնադրումը և նրա գործունեության առաջին տարիներն անքակտելիորեն կապված են Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, ակադեմիկոս Հ. Օրբելու անվան հետ, ով դարձավ նորաստեղծ ինստիտուտի առաջին տնօրենը (1943–1947 թթ.): Նույն թվականներին ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենն էր Մ. Ներսիսյանը (1944–1947 թթ.): Ակադեմիկոս Հ. Օրբելուց հետո, 1947–1953 թթ. ինստիտուտի տնօրեն դարձավ Աբ. Հովհաննիսյանը, որին հաջորդեց Ս. Երեմյանը (1953–1959 թթ.): Ինստիտուտի տնօրենի պաշտոնը 1959–1963 թթ. զբաղեցրել է Ա. Հարությունյանը (Հարենցը), որից հետո՝ Գ. Գալոյանը (1963–1979 թթ.): 1962 թ. վերականգնվել է գիտական հարցերի գծով փոխտնօրենի պաշտոնը, որը մինչև 1966 թ. զբաղեցրել է Գ. Սարգսյանը, նրանից հետո մինչև 1991 թ.՝ Վ. Բարխուդարյանը: 1979–2002 թթ. ինստիտուտը ղեկավարել է Հ. Ավետիսյանը, գիտական հարցերի գծով փոխտնօրեն են եղել Ռ. Ազիզբեկյանը (1991–1994 թթ.) և Ա. Մելքոնյանը (1994–2002 թթ.), գիտքարտուղարներ՝ Ռ. Գասպարյանը (1994–1999 թթ.) և Կ. Խաչատրյանը (1999–2008 թթ.): 2002 թ. մինչ օրս պատմության ինստիտուտի տնօրենն է Ա. Մելքոնյանը: 2002–2008 թթ. փոխտնօրեն է եղել՝ Գ. Գրիգորյանը: 2008 թվա-

կանից ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենը Կ. Խաչատրյանն է, գիտական քարտուղարը՝ Հ. Մուրադյանը:

Ինստիտուտում գիտական աշխատանքների կազմակերպման գործում կարևոր դերակատարում է ունեցել ինստիտուտի գիտական խորհուրդը, որի նիստերը գումարվել են պարբերաբար, դրանցում լսվել են գիտական զեկուցումներ, քննարկվել գիտակազմակերպական հարցեր և այլն: Խորհրդի կազմում ընդգրկված էին ավագ և երիտասարդ սերնդի ճանաչված գիտնականներ՝ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը, Ս. Մալխասյանը, Ա. Իսահակյանը, Գ. Լևոնյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Լ. Գյուլիքեխվյանը, Կ. Տրևերը, Վ. Ռշտունին, Ա. Ղարիբյանը, Բ. Պիոտրովսկին, Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Մ. Հասրաթյանը, Զ. Գրիգորյանը և ուրիշներ՝ թվով 28 գիտնական:

Ինստիտուտի կազմում գործում էին հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն պատմության, հնագիտության, փիլիսոփայության գիտական ստորաբաժինները: Վերջիններիս հիման վրա հետագայում ՀԽՍՀ ԳԱ համակարգում ստեղծվեցին գիտական ինքնուրույն հաստատություններ: 1947 թ. ինքնուրույն դարձան փիլիսոփայության և արվեստի պատմության բաժինները: 1957 թ. ինստիտուտից առանձնացավ Մերձավոր արևելքի խումբը, որի հիման վրա ստեղծվեց ակադեմիայի արևելագիտության բաժինը, որը հետագայում վերածվեց ինստիտուտի: 1959 թ. ինստիտուտից անջատվեց հնագիտության և ազգագրության բաժինն ու նրա հենքի վրա կազմակերպվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ առաջինը հիմնվել է ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժինը: Բաժնի վարիչ Բ. Պիոտրովսկու հեղինակությամբ շուտով լույս տեսան Կարմիր բլուրում կատարված պեղումների հաշվետվությունները: Նրա «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» ուսումնասիրությունն արժանացավ ԽՍՀՍ պետական մրցանակի: Արդյունավետ աշխատանքներ տարվեցին հին և միջնադարյան Հայաստանի պատմության բարդ ու առանցքային հիմնախնդիրների լուսաբանության ուղղությամբ: Ս. Երեմյանը հրատարակեց «Հայաստանն ըստ Աշխարհացույցի» մենագրությունը: Լ. Բաբայանը քննության ենթարկեց XIII–XIV դարերի

Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հարցերը: Ի հայտ եկան աղբյուրագիտական լուրջ հետազոտություններ: Վ. Հակոբյանը Մատենադարանի գրչագրերից քաղած նյութերի հիման վրա հրատարակեց XIII–XVIII դդ. հայերեն մանր ժամանակագրությունների երկհատորյակը: Նա նախաձեռնեց միջնադարյան Հայաստանի եկեղեցական իրավունքի ժողովածուի՝ «Կանոնագիրք Հայոց»-ի ստեղծման ու հրատարակման գործը: Վ. Հակոբյանը 1964 և 1971 թթ. Հայաստանի պատմությամբ հետաքրքրվողների սեղանին դրեց հարուստ ու տարաբնույթ տեղեկություններ պարունակող սկզբնաղբյուր, որի գիտական արժեքը դժվար է գերագնահատել: Այս սկզբնաղբյուրի աշխատասիրողն 1974 թ. արժանացել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի: Վ. Հակոբյանը Աշ. Հովհաննիսյանի հետ կազմեց և հրատարակեց նաև XVII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին (1601–1620 թթ.) և երկրորդ (1621–1640 թթ.) հատորները՝ համապատասխանաբար՝ 1974 և 1978 թթ.: Լ. Խաչիկյանը կազմեց XIV և XV դդ. հայերեն ձեռագիր հիշատակարանների բազմահատոր ժողովածուն:

Հին և միջին դարերի պատմության բաժնում արդյունավետ գործունեություն էր ծավալել Հ. Անասյանը, որը սկզբնավորեց V–XVIII դդ. հայ ինքնուրույն և թարգմանական, տպագիր և անտիպ գրականության մշակումը: Նրա «Հայկական մատենագիտություն» եզակի ուսումնասիրությունը, հայագիտության մեծագույն ձեռքբերումներից է, որը, ցավոք, հեղինակի մահվան պատճառով չավարտվեց: Այն իրավացիորեն համարվել է հայերենի գրական հուշարձանների հանրագիտարան:

Միջնադարյան Հայաստանի պատմության առանցքային հիմնախնդիրներից մեկի՝ Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությունը հիմնավորապես ուսումնասիրեց Գ. Միքայելյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ դեպի Կիլիկիա հայերի կատարած արտագաղթին, հայկական իշխանությունների և Կիլիկյան պետության երևան գալու ու նրա անկման սոցիալ-քաղաքական և տնտեսական պատճառներին, Արևելք-Արևմուտք հարաբերություններում Կիլիկյան Հայաստանի ունեցած կապերին: Գ. Միքայելյանի գիրքը, որ հրատարակվեց 1952 թ., հիմնահարցին նվիրված առաջին

ամբողջական հետազոտությունն էր, որն այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը: Կիլիկիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանն անդրադարձան նաև Ս. Բոռնազյանն ու Ա. Գալստյանը:

1950-ական թվականների սկզբից գիտական ասպարեզ մտան երիտասարդ գիտնականներ, որոնք ոչ միայն նոր թափ հաղորդեցին բաժնի աշխատանքներին, այլև նպաստեցին ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկայի ընդլայնմանն ու աշխատանքների որակի բարձրացմանը: Նրանցից ոմանք իրենց ասպիրանտական ուսումնառությունն ստացել էին միութենական գիտական առաջավոր կենտրոններում՝ Մոսկվայում, Լենինգրադում՝ աշակերտելով հին և միջնադարյան պատմության ու արվեստի հայտնի գիտուններին՝ Հ. Օրբելուն, Բ. Պիոտրովսկուն, Կ. Տրևերին, Ն. Պիգուլևսկայային, Ա. Տվերիտինովային, Ք. Կոլոբովային և ուրիշների:

Զարգացած միջնադարի ագրարային հարցերի հետազոտությամբ զբաղվեց Վ. Բարխուդարյանը, պավլիկյան շարժման սկզբնաղբյուրներն ուսումնասիրեց և դրա արդյունքները հրատարակեց Հ. Բարթիկյանը, արաբական շրջանում Հայաստանում հաստատված ամիրությունների պատմությունը շարադրեց Ա. Տեր-Ղևոնդյանը: Հայասորական առնչությունների խնդրին անդրադարձավ Հ. Մելքոնյանը: Երվանդունիների հարստության հիմնահարցերն ուսումնասիրեց Գ. Տիրացյանը: Սելջուկների՝ Հայաստան կատարած արշավանքների, Հայաստանում ստեղծված սելջուկյան ամիրայությունների հարցերը հանգամանալից ներկայացրեց Ս. Բոռնազյանը, որի մենագրությունը խարսխված է հայկական ու թուրքական սկզբնաղբյուրների, ինչպես նաև թուրքագետ հեղինակների աշխատությունների վրա: XV–XVIII դդ. Արևմտյան և Արևելյան Հայաստանի քաղաքական, սոցիալ տնտեսական պատմությանը սկզբում հոդվածներով, իսկ հետագայում՝ մենագրություններով անդրադարձան Մ. Զուլալյանը, Հ. Փափազյանը, Վ. Գրիգորյանը, Հ. Բարթիկյանը, Ս. Կրկյաշարյանը, Հ. Մելքոնյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը: Նրանք ոչ միայն մենագրություններ հրատարակեցին իրենց կողմից ուսումնասիրվող հիմնահարցերին նվիրված, այլև «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ընդհանուր խորագիրը կրող շարքը հարստացրին

առանձին՝ բյուզանդական, հունական, ասորական, արաբական և թուրքական աղբյուրների նոր շարքերով: Դրանք լոկ թարգմանություններ չէին, այլ ընդարձակ առաջաբաններով և ծանոթագրություններով օժտված ու մատենագիտական ցանկով ներկայացված բարձրարժեք աշխատություններ:

Պատմության ինստիտուտի հին և միջին դարերի պատմության բաժինը 1966 թ. տրոհվեց: Հին դարերի պատմության բաժնի վարիչ նշանակվեց Գ. Սարգսյանը: 1970-ական թվականներին այս բաժնի աշխատանքների հեռանկարները կապված էին հետևյալ չորս խնդիրների հետ. ա) Հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, բ) Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական կարգի, գ) Հին Հայաստանի քաղաքական պատմության հիմնահարցեր, դ) Հին Հայաստանի պատմության աղբյուրագիտություն: Որպես առաջնային հիմնախնդիրներ առանձնացվել էին Ուրարտու-Հայաստանի, Հին Հայաստանի հոգևոր մշակույթի և աղբյուրագիտական ուսումնասիրությունները: Օտար աղբյուրների մատենաշարից բացի՝ ուշադրություն է դարձվել նաև վաղ միջնադարյան հայ մատենագրության ուսումնասիրության վրա, որն ուղղակի կամ անուղղակի կապվում է հայոց պատմության հին շրջանի հետ:

Գիտական արտադրանքի ադյունավետությամբ աչքի ընկավ ինստիտուտի նոր դարերի պատմության բաժինը, որի առաջին վարիչը եղել է Վ. Ռշտունին, այնուհետև՝ Վ. Պարսամյանը, Ծ. Աղայանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Համբարյանը, Է. Կոստանդյանը: Հայոց պատմության տարբեր հիմնախնդիրների, հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում զգալի ներդրում ունեցան Աշ. Հովհաննիսյանը, Աբ. Հովհաննիսյանը, Հ. Անասյանը, Վ. Ռշտունին, Վ. Պարսամյանը, Զ. Գրիգորյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Դիլոյանը, Հ. Պողոսյանը, Ա. Համբարյանը, Ն. Սարուխանյանը և ուրիշներ: Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկու գրքերը իրավացիորեն կարելի է դիտել հայ պատմական գիտության լուրջ նվաճումներից մեկը:

1950-ական թվականների կեսից աճեց հետաքրքրությունը հայկական գաղթավայրերի պատմության նկատմամբ: Հրատարակվե-

ցին աշխատություններ՝ նվիրված Ռուսաստանի, Ուկրաինայի, Հունգարիայի, եվրոպական այլ երկրների, Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի հայկական գաղթավայրերի, հայերին հյուրընկալած երկրների տնտեսական ու հասարակական կյանքին նրանց մասնակցության, հայ ազգային մշակույթի զարգացման, հայրենիքի հետ հայկական գաղթավայրերի կապերի, հայկական սփյուռքի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի, սփյուռքահայ քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների, սփյուռքահայության հայրենադարձության կազմակերպման ու իրագործման պատմությանը (Վ. Բարխուդարյան, Վ. Միքայելյան, Ա. Աբրահամյան, Լ. Խուրշուդյան, Ռ. Խաչատրյան, Հ. Մելիքսեթյան, Ժ. Անանյան, Ս. Քոլանջյան, Ս. Հովնանյան, Կ. Դալլաքյան, Զ. Ղասաբյան և ուրիշներ):

Այս բնագավառում հրատարակված աշխատություններից ու հոդվածներից զատ, կարևոր նշանակություն ունեցան Ուկրաինայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների կազմակերպված համատեղ գիտաժողովները՝ նվիրված Ուկրաինայի հայկական գաղութների և հայ-ուկրաինական պատմական կապերին (1959, 1966 և 1987 թթ.՝ Երևան, 1962 թ.՝ Կիև, Լվով): Այս գիտաժողովների նյութերն առանձին գրքերով հրատարակվեցին Երևանում և Կիևում («Հայ և ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունն ու պատմական կապերը», ռուսերեն, Երևան, 1961 թ., Կիև, 1965 թ., Երևան, 1971 թ.): Նման գիտական համագործակցության արդյունք է նաև «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (Երևան, 1983 թ.) հոդվածների ժողովածուն, որն իրականացվել է ՀԽՍՀ և Հունգարիայի Գիտությունների ակադեմիաների միջև 1968 թ. կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա:

1965 թ. ինստիտուտում սկսեց գործել հայ պարբերական մամուլի պատմության բաժինը: Բաժնում գիտահետազոտական աշխատանքներն ընթացել են մի քանի ուղղություններով՝ ուսումնասիրվել են մամուլի առանձին օրգաններ, հասարակական և քաղաքական ուղղություն ներկայացնող գործիչների ժառանգությունը (հաճախ՝ այս երկուսը միասին), տպագրվել են մամուլի պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններ, հայ գաղթօջախների մա-

մուլի հիմնահարցերը լուսաբանող մենագրություններ, մամուլի մատենագիտություններ և գիտական այլ երկասիրություններ:

Ինստիտուտի գիտական կարևոր օղակներից էր պատմագրության բաժինը, որի վարիչ Լ. Բաբայանը հրատարակեց միջնադարի տարբեր փուլերի պատմագրությանը նվիրված աշխատություններ:

Աշխատությունների և մենագրությունների հետ մեկտեղ, խորհրդային տարիներին ինստիտուտը լույս ընծայեց տարբեր ժամանակաշրջանների հիմնահարցերին վերաբերող փաստաթղթերի և նյութերի բազմաթիվ ժողովածուներ: Հատկապես մեծ արժեք են ներկայացնում XVII–XVIII դդ. հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի և նյութերի բազմահատորյակը, «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» (2 հատորով), «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Հայրենական մեծ պատերազմին հայերի մասնակցության և այլ թեմաներով ժողովածուները:

Հայ պատմաբանների ձեռքբերումները խորհրդային ժամանակաշրջանում ընդհանրացվեցին պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակում (Երևան, 1967–1984), որն արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի: Բազմահատորյակն իրավացիորեն դիտվեց հայ պատմագիտական մտքի նվաճում: Այն հայ պատմագիտության մեջ աննախադեպ երևույթ էր: Պատմության ինստիտուտին է պատկանում հայ ականավոր պատմաբան Հ. Մանանդյանի երկերի ամբողջական հրատարակության պատիվը:

Այդուհանդերձ, խորհրդային ամբողջատիրության պայմաններում, ընդհանուր առմամբ, պատմագիտության համար ստեղծված չէին լիակատար առաջընթացի լայն հնարավորություններ: Պատմության շատ հիմնահարցեր կամ շրջանցվում էին, կամ էլ քննվում էին ոչ ճիշտ, աղավաղվում էին, առանձին դեպքերում՝ գունազարդվում ու միակողմանիորեն էին ներկայացվում պատմական որոշ իրադարձություններ ու երևույթներ:

Պատմագիտությունը որոշակի ազատություն ստացավ վերակառուցման տարիներին: Արցախյան շարժման առաջին օրերից պատմության ինստիտուտում ստեղծվում է «Լեռնային Ղարաբաղ» տեղեկատուն (1988), որը թարգմանվեց մի քանի լեզուներով և տա-

ռածվեց արտասահմանում: Պատմական տեղեկանքը կարևոր նշանակություն ունեցավ Արցախի ճշմարիտ պատմությունը ներկայացնելու համար, նպաստեց թուրք-ադրբեջանական խեղաթյուրումների և բացահայտ կեղծիքների մերկացմանը:

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, հիմնվելով նախկինից եկող պատմագիտական ավանդույթների վրա, արդեն զերծ գաղափարաքաղաքական կաշկանդիչ պարտադրանքներից, հայ պատմագիտությունը զգալի հաջողություններ է արձանագրել: Այդ աշխատանքներում իրենց ներդրումն են ունեցել ինչպես պատմության ինստիտուտի ավագ սերնդի պատմաբանները, այնպես էլ անկախ պետականության օրոք գիտական ասպարեզ մտած երիտասարդ ուսումնասիրողները:

1992 թ. պատմության ինստիտուտի գիտական օղակներում տեղի ունեցան կառուցվածքային արմատական փոփոխություններ: Ինստիտուտում ստեղծվեցին գիտահետազոտական աշխատանքների թեմատիկ խմբեր.

ա) Հին հայկական պետականության սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը (գիտական ղեկավար՝ Ս. Կրկյաշարյան),

բ) Հին և վաղ միջնադարյան Հայաստանի պատմաքաղաքական աշխարհագրությունը (է. Դանիելյան),

գ) Հայաստանը միջին դարերում (Հ. Բարթիկյան),

դ) էթնիկ տեղաշարժերը Հայաստանում XIX դ. վերջին – XX դ. սկզբին (Ա. Մելքոնյան),

ե) Հայ հասարակական-քաղաքական կյանքը XIX դ. վերջին – XX դ. սկզբին (է. Կոստանդյան),

զ) Հայ ազգային քաղաքական կուսակցությունները և նրանց գաղափարաբանությունը (Դ. Մուրադյան),

է) Հայկական հարցը, հայոց ցեղասպանությունը և մեծ տերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին (Ս. Ստեփանյան),

ը) Հայ գաղթավայրերի պատմություն (Վ. Միքայելյան),

թ) Հայ-ռուսական հարաբերությունները XIX դարում (Վ. Բարխուդարյան),

ժ) Սոցիալ-մշակութային և քաղաքական իրադրությունը սփյուռքում և ինքնության պահպանության խնդիրը XX դարի 20–40-ական թվականներին (Կ. Դալլաքյան),

ժա) Հայերի սոցիալ-մշակութային գործունեությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում 1922–1939 թթ. (Զ. Ղասաբյան),

ժբ) Հասարակական-քաղաքական միտքը մամուլում և հրապարակախոսության մեջ (Ա. Խառատյան),

ժգ) Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (Հ. Ավետիսյան),

ժդ) Խորհրդային Հայաստանի պատմություն (Վ. Ղազախեցյան),

ժե) Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (Կ. Հարությունյան),

ժզ) Խորհրդային ցենզուրայի պատմություն (Գ. Մարտիրոսյան):

Այսօր ինստիտուտն ունի 7 բաժին, գրադարան, Մեսրոպ արք. Աշճյանի անվան գիտական կենտրոն, որն իր մեջ ներառում է թանգարան, տպարան, որտեղ «Մեսրոպ արք. Աշճյան» մատենաշարով տպագրվում են ինստիտուտի գիտաշխատողների գրքերը. մինչ օրս տպագրվել է շուրջ 100 անուն աշխատություն: Ինստիտուտում ներկայումս աշխատում են 2 ակադեմիկոս, 2 թղթակից-անդամ, գիտության 21 դոկտոր և 47 թեկնածու: Ինստիտուտին կից գործում է ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի «Հայոց պատմության» մասնագիտական խորհուրդը, նաև՝ ԳԱԱ ԳԿՄԿ պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնը: Վերջինս իրականացնում է «Պատմություն» և «Միջազգային հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցում:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո նոր հիմքերի վրա դրվեց Հայոց հին և միջին դարերի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Ինստիտուտի աշխատակիցների կողմից ուսումնասիրություններ են հրատարակվել հնագույն հայկական պետական կազմավորումների, Վանի թագավորության, Երվանդունիների, Արտաշեսյան դարաշրջանի Հայաստանի (Է. Դանիելյան, Վ. Խաչատրյան, Ա. Ղարագյոզյան, Ե. Մարգարյան Ռ. Մանասերյան, Ս. Կրկյաշարյան, Գ. Վարդումյան, Ռ. Գաբրիելյան, Ա. Մուշեղյան և ուրիշներ) վերաբերյալ: Ս. Կրկյաշարյանը հայերեն թարգմանութ-

յամբ հրատարակեց Հերոդոտոսի պատմությունը, Քսենոփոնի «Կյուրոպեդիա», Պլուտարքոսի «Կենսագրություններ» և այլ գործեր: Հայ-բյուզանդական հարաբերությունների վերաբերյալ մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել ակադեմիկոս Հ. Բարթիկյանը: Նրա հրատարակած «Հայ-բյուզանդական հետազոտություններ»-ի եռահատորյակը արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին:

Ուսումնասիրվել են վաղմիջնադարյան Հայաստանի վարչաքաղաքական բաժանումները, եկեղեցի-պետություն հարաբերությունները (Է. Դանիելյան, Վ. Վարդանյան), Աղվանքի (Հ. Սվազյան), Արցախի մելիքությունների և մելիքական տների XVII–XIX դդ. պատմության հարցերը (Ա. Մադալյան):

Ուսումնասիրություններ են կատարվել միջնադարում Հայոց եկեղեցու դերի, Արծրունի և Պահլավունի իշխանական տոհմերի պատմության (Վ. Վարդանյան), Անի մայրաքաղաքի եկեղեցիներին կատարված նվիրատվությունների (Գ. Գրիգորյան) վերաբերյալ: Իրենց աշխատություններում միջնադարյան Հայաստանի պատմության առանձին խնդիրներ են լուսաբանել Ա. Շահնազարյանը, Հ. Թորոսյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը, Վ. Թորոսյանը, Հ. Ստեփանյանը, Վ. Փափազյանը, Ա. Ութուջյանը, Կ. Մելիքյանը և ուրիշներ:

Նոր ուսումնասիրություններ են հրատարակվել Կիլիկիայի հայկական թագավորության պատմության վերաբերյալ (Վ. Տեր-Ղևոնդյան, Դ. Թինոյան, Զ. Գևորգյան և ուրիշներ):

Հայ պատմաբաններն այսօր ազատորեն ուսումնասիրում են խորհրդային տարիներին «փակ» համարվող բազում հիմնահարցեր: Ուսումնասիրվեցին XVII–XVIII դդ. հայ ազատագրական շարժումները, XIX դ. վերջի և XX դ. սկզբի արևմտահայ ազատագրական շարժումները, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները (Հ. Սիմոնյան, Գ. Գալոյան, Ա. Համբարյան, Է. Կոստանդյան, Ս. Ալեքսանյան, Վ. Հովակիմյան), հայ ավանդական կուսակցությունների պատմությունը. ՀՅԴ (Կ. Խուդինյան), արմենականներ, ՌԱԿ (Կ. Դալլաքյան, Ս. Սարգսյան, Ա. Կարապետյան), ՍԴՀԿ (Գ. Հովհաննիսյան):

Ուսումնասիրություններ կատարվեցին նաև Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հիմնահարցերի վերաբերյալ: Հրատարակվեցին ցեղասպանությանն առնչվող տեսական հարցերի, ցեղասպա-

նության իրականացման թուրքական քաղաքականության շարունակականության, միջազգային արձագանքների, ասորիների ցեղասպանության (Գ. Գալոյան, Հ. Սիմոնյան, Ն. Սարուխանյան, Ս. Ստեփանյան, Գ. Մախմուրյան, Ա. Մարուքյան, Վ. Պողոսյան, Ռ. Գասպարյան, Ռ. Օ. Սահակյան, Կ. Խաչատրյան, Ա. Ղամբարյան, Հ. Բոյաջյան, Լ. Հովհաննիսյան, Բ. Պողոսյան, Ա. Խոսրոևա և ուրիշներ) վերաբերյալ ուսումնասիրություններ: Հրատարակվել են նաև Հայոց ցեղասպանությունը փաստող գերմանական, ֆրանսիական, ռուսական արխիվների (Ս. Ստեփանյան, Վ. Միքայելյան, Վ. Պողոսյան, Ա. Մարուքյան) փաստաթղթերը: 2013 թ. սկզբին լույս է տեսել Ա. Մելքոնյանի «Հայոց պատմության դասերն ու պատգամները» նյութերի ժողովածուն, որտեղ զետեղված են հայաստանյան և սփյուռքյան մամուլում հեղինակի տպագրած հոդվածներն ու հարցազրույցները: Բազմաբնույթ նյութի մեջ գերակշռում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հատուցման թեման:

Շարունակելով նախկինից եկող լավագույն ավանդները՝ նոր աշխատություններ են հրատարակվել հայկական գաղթավայրերի վերաբերյալ. Մոսկվա և Պետերբուրգ (Վ. Բարխուդարյան), Կոստանդնուպոլիս (Ա. Խառատյան), ԱՄՆ (Ք. Ավագյան), սկանդինավյան երկրներ (Ա. Բախչինյան), ԽՍՀՄ՝ «ներքին սփյուռք» (Հ. Ալեքսանյան): Ուսումնասիրվել է հայկական սփյուռքի (Կ. Դալլաքյան), Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմությունը (է. Մելքոնյան), Գ. Գյուլբենկյանի գործունեությունը (Կ. Դալլաքյան, Վ. Ղարախանյան): Բաքու քաղաքի հայության պատմաժողովրդագրությանն է վերաբերում Գ. Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունը, որը հրատարակվել է նաև անգլերենով: Վ. Միքայելյանի խմբագրությամբ հրատարակվեցին «Հայ գաղթաշխարհի պատմություն» երկու հատորները: Վ. Բարխուդարյանի խմբագրությամբ հրատարակվեց այդ աշխատության երրորդ հատորը:

Արևմտահայ մամուլի և հասարակական-քաղաքական կյանքի պատմության հիմնահարցերին է նվիրված ինստիտուտի կողմից 2006 թ. հրատարակված «Հայ պարբերական մամուլի պատմություն (18–19-րդ դարեր)» մեծածավալ աշխատության 1-ին հատորը: Հրատարակության է պատրաստ աշխատության 2-րդ հատորը (խմբա-

գիր՝ Ա. Խառատյան): Հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության վերաբերյալ արժեքավոր աշխատություններ հրատարակեցին Մ. Մխիթարյանը, Ա. Խառատյանը, Ռ. Խաչատրյանը, Լ. Գևորգյանը, Ս. Նազարյանը, Է. Ստեփանյանը և ուրիշներ:

Ա. Մելքոնյանի ղեկավարությամբ ինստիտուտում սկսեց գործել գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող Հայաստանի նահանգների վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության թեմատիկ խումբ: Թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է Հայաստանի տարածաշրջանների XIX–XX դդ. պատմությունը և ժողովրդագրությունը. Էրզրումի նահանգ, Ջավախք (Ա. Մելքոնյան), Լոռի (Հ. Ամիրջանյան), Արցախ (Հ. Հարությունյան, Հ. Աբրահամյան և այլք), Կարսի մարզ և նահանգ (Ա. Հակոբյան, Հ. Մուրադյան), Երևանի նահանգ (Գ. Կիրակոսյան), Նոր-Բայազետի գավառ (Հ. Հարությունյան), Ալեքսանդրապոլի գավառ (Ա. Հայրապետյան) և այլն:

Մեծ ուշադրություն է հատկացվել Հայաստանի առաջին Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի պատմության ուսումնասիրությանը: Լույս են տեսել զգալի թվով փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, այդ թվում՝ «Нагорный Карабах в 1918–1923 гг.» (խմբագրությամբ՝ Վ. Միքայելյանի), «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» (կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան և ուրիշներ), «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը. 1918 թ. մայիս-հուլիս» (կազմող՝ Հ. Սուքիասյան), «Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг.» (կազմող՝ Գ. Մախմուրյան), «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» (կազմողներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան):

Ուսումնասիրվել են 1918 թ. անկախության նախօրյակի իրադարձությունները, Հայկական հարցը, մայիսյան հերոսամարտերը (Հ. Ավետիսյան, Վ. Մելիքյան), ՀՀ խորհրդարանի, քաղաքական կուսակցությունների գործունեությունը (Ա. Հակոբյան), Հայոց զինուժի պատմությունը (Կ. Հարությունյան, Մ. Կարապետյան), մշակույթը (Գ. Վարդանյան), ՀՀ նկատմամբ արևմտյան պետությունների, ինչպես

նաև Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի քաղաքականությունը (Հ. Ավետիսյան, Գ. Գալոյան, Գ. Մախմուրյան, Կ. Խաչատրյան և ուրիշներ): Առանձին ուսումնասիրության խնդիր է դարձել Գարեգին Նժդեհի գործունեությունը (Վ. Ղազախեցյան):

Նոր հայեցակետով, առանց գաղափարական պարտադրանքների ուսումնասիրվել են Հայաստանի խորհրդային շրջանի պատմության առանցքային հարցերը: 1920–1940 թթ. Խորհրդային Հայաստանի ամբողջական պատմության վերաբերյալ ծավալուն մենագրություն է հրատարակել Վ. Ղազախեցյանը: Առանձին ուսումնասիրվել են Հայաստանի խորհրդայնացման, 1920–1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերը, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը (Կ. Խաչատրյան, Ա. Հակոբյան): Կարևոր ուսումնասիրություններ են կատարվել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայերի մասնակցության, հայ անվանի զորավարների գործունեության, թիկունքի աշխատանքների, Խորհրդային Հայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերության խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ (Կ. Հարությունյան, Գ. Խաչատրյան, Կ. Խաչատրյան):

Աշխատություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ են հրատարակվել նաև Հայաստանի Երրորդ Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության վերաբերյալ: Ուսումնասիրվել է Հայաստանի անկախացման գործընթացը, սոցիալ-տնտեսական դրությունը, քաղաքական կյանքը, ԼՂՀ կայացման ընթացքը (Գ. Գեղամյան, Կ. Խուդավերդյան, Ռ. Ագիզբեկյան, Հ. Աբրահամյան և ուրիշներ):

Պատմության ինստիտուտում գործող «Հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրումը թուրք-ադրբեջանական պատմագրության մեջ» թեմատիկ խմբի շրջանակներում հրատարակվել է է. Դանիելյանի «Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության» աշխատությունը, որում արցախյան ազատագրական պայքարի արդյունքում ձեռք բերած հաղթանակն իմաստավորվում է որպես գաղափարական հզոր զենք ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

Ինստիտուտը հրատարակում է «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուն, 2012 թ. լույս է տեսել ժողովածուի հերթական՝ 13-րդ համարը: Ինստիտուտը կարևոր մասնակցություն ունի դպրոցական ու բուհական դասագրքերի և ձեռնարկների ստեղծման աշխատանքներին:

Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագիտության ունեցած ձեռքբերումներն արտացոլվելու են ինստիտուտի կողմից պատրաստվող «Հայոց պատմություն» ակադեմիական նոր հրատարակությունում (չորս հատոր՝ յուրաքանչյուրը երկու գրքով, նաև մեկական հատոր ռուսերեն և անգլերեն): 2010 թ. հրատարակվել են արժեքավոր այդ աշխատության երրորդ հատորի առաջին (XVII դ. II կես – 1900 թ.) և չորրորդ հատորի առաջին գրքերը (1918–1945 թթ.):

Ինստիտուտն ունի լայն միջազգային կապեր: Պատմության ինստիտուտը հանդիսանում է ԱՊՀ պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի անդամ: Հաստատության ավագ գիտաշխատողները մասնակցում են վերջինիս շրջանակներում պարբերաբար կազմակերպվող գիտական միջոցառումներին, իսկ երիտասարդները՝ Ամառային դպրոցներին:

Այսպիսով, ԳԱԱ պատմության ինստիտուտն իր յոթանասունամյա գործունեության ընթացքում ծավալուն աշխատանք է կատարել Հայոց պատմության հիմնահարցերի հետազոտման, անկողմնակալ և պատմականության հենքի վրա այն ներկայացնելու ուղղությամբ: Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին ինստիտուտի աշխատակիցները ջանքեր չեն խնայելու Հայոց ցեղասպանության պատմության հետագա ուսումնասիրության, հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության խնդիրների բարձրաձայնման ու լուծման ուղղությամբ:

ASHOT MELKONYAN,
KAREN KHACHATRYAN

INSTITUTE OF HISTORY

SUMMARY

In November 1943 the formation of the Institute of History of the Academy of Sciences of Armenia gave a new impetus to the national historiography. The foundation of the Institute and the first years of its activities are inextricably linked with the name of the first President of the Academy of Sciences of Armenia, academician H.A. Orbeli. The Institute soon put together the team of prominent representatives of the Armenian historical science and became a leading center of the historical thought of the Republic. In fact, there started a systematic and holistic study of the history of Armenia and the Armenian people from ancient times to the modern period.

Since its formation the Institute had departments of ancient and medieval, new and modern history, archaeology, philosophy, which served as a basis for the establishment of separate scientific institutes of the Academy of Sciences. In 1947 the departments of philosophy and history of arts became independent institutions. In 1957 the group studying the Middle East separated from the Institute and the department of Oriental Studies was formed, which later was transformed into the Institute of Oriental Studies. In 1959 the Department of Archaeology and Ethnography separated from the Institute and on its basis the Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences was formed.

Until 1991 9 research departments functioned at the Institute, then there were formed thematic groups. At present there are 7 departments and a research center (named after Archbishop Mesrop Ashchyan). The latter includes a museum, a printing house, which publishes the works of the scientific staff of the Institute. The Institute has 2 academicians, 2 corresponding members, 21 doctors and 47 candidates of science. At the Institute functions a specialized council of the High Attestation Commission of the MES of RA, on the speciality "History of Armenia". There also functions the Department of History and International Relations of the International Scientific-Educational Center of NAS RA, realizing training programs for magistrates.

After gaining independence by the Republic of Armenia the achievements of the Armenian historiography have been summarized in the forthcoming new edition of "The History of Armenia" (four volumes, 2 books of each, one in Russian and one in English) realized by the Institute of History of the National Academy of Sciences. In 2010 the first book of the third volume (the second half of the 17th century – 1900) and the first book of the fourth volume (1918–1945) were published.

During 70 years of the existence the Institute of History of NAS RA by means of its productive work realizes a special and important role in the study of the problems of the history of the Armenian people and the development of the Armenian historiography.

АШОТ МЕЛКОНЯН,
КАРЕН ХАЧАТРЯН

ИНСТИТУТ ИСТОРИИ

РЕЗЮМЕ

Создание в ноябре 1943 г. в составе Академии наук Армении Института истории придало новый толчок отечественной историографии. Основание Института и первые годы его деятельности неразрывно связаны с именем первого президента Академии наук Армении, академика И. А. Орбели. Институт вскоре собрал коллектив выдающихся представителей армянской исторической науки и стал основным и передовым центром исторической мысли республики. Фактически началось систематическое и целостное изучение истории Армении и армянского народа с древнейших времен до новейшего периода.

С момента своего создания Институт имел отделы древней и средневековой, новой и новейшей истории, археологии, философии. На основе последних впоследствии были созданы самостоятельные научные институты в составе Академии наук. В 1947 г. самостоятельными учреждениями стали отделы философии и истории искусств. В 1957 г. от Института отделилась группа Ближнего Востока и был создан отдел востоковедения, который позже был преобразован в институт. В 1959 г. из Института истории выделился отдел археологии и этнографии, на основе которого был создан Институт археологии и этнографии Академии наук.

До 1991 г. в Институте истории действовало 9 научных отделов, затем были созданы тематические группы. Ныне в Институте 7 отделов и научный центр (имени архиеп. Месропа Ашчяна). Последний включает музей, типографию, в которой издаются работы научных сотрудников Института. В Институте работают 2 академика, 2 члена-корреспондента, 21 доктор и 47 кандидатов наук. При Институте действует специализированный совет ВАК-а МОН РА по специальности «История Армении», а также кафедра Истории и международных отношений Международного научно-образовательного центра НАН РА, осуществляющая учебные программы по магистратуре.

Достижения армянской исторической науки после обретения независимости Республикой Армения обобщены в подготавливаемом Институтом истории НАН РА новом издании «Истории Армении» (четыре тома, по 2 книги каждый, по одному на русском и английском языках). В 2010 г. вышли в свет первая книга третьего тома (2-я половина XVII в. – 1900 г.) и первая книга четвертого тома (1918–1945 гг.).

Институт истории НАН РА за 70 лет существования своей плодотворной работой выполняет особую и важную роль в изучении проблем истории армянского народа, в развитии армянской историографии.

«Պատմաբանասիրական հանդես»,
Երևան, 2013, N 2, էջ 13–24: